ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. սեպտեմբերի 2-8-ը Ռուսաստանի Դաշնություն (Օրենբուրգ)

կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Անգելինա Հովհաննիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի վարչության արտաքին կապերի բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ռուսաստանի Դաշնություն (Օրենբուրգ), 2021թ. սեպտեմբերի 2-8-ը

4. **Հրավիրող կողմը՝**

   ՌԴ Երիտասարդության հարցերի դաշնային գործակալություն

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն «Եվրասիա Գլոբալ» միջազգային երիտասարդական ֆորումին

6. **Քննարկված թեմաները**

   «Եվրասիա Գլոբալ» միջազգային երիտասարդական ֆորումի ընթացքում քննարկումներն իրականացվել են չորս հիմնական ուղղություններով. «Գործընկերություն կրթության ոլորտում և իրավասությունների զարգացում. մարդկային ներուժի նոր դերը»,
   «Համագործակցություն և երիտասարդական ձեռնարկատիրական համագործակցություն»,

«Կայուն զարգացում, էկոլոգիա, գիտակցված սպառում» և «Երիտասարդության ձայնը. ժամանակակից լրատվամիջոցները և հաղորդակցության ուղիները»:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

«Եվրասիա Գլոբալ» միջազգային երիտասարդական ֆորումի հագեցած ծրագիրը հնարավորություն ընձեռեց մասնակցելու փորձագետների, կառավարության և գործարար ղեկավարների ներկայացուցիչների, գիտնականների, մշակույթի գործիչների և հասարակական առաջնորդների հետ քննարկումներին:
Ֆորումի ընթացքում կազմակերպվել են նաև հանդիպումներ Օրենբուրգի մարզի նահանգապետ Դ.Վ. Պասլերի, ՌԴ Երիտասարդության հարցերի դաշնային գործակալության ղեկավարի տեղակալ Պ.Վ. Աբրամովի, ՌԴ ԱԳՆ հայրենակիցների հետ աշխատանքի դեպարտամենտի բաժնի պետ Ա. Ռոսկոշնիի հետ:
ՌԴ Երիտասարդության հարցերի դաշնային գործակալության Երիտասարդական նախագծերի և ծրագրերի վարչության միջազգային բաժնի պետ Վ.Ս. Չերնոգորոդովայի հետ հանդիպման ընթացքում իր կողմից ներկայացվել են նախատեսվող միջոցառումների օրացույցը, քննարկվել են հայկական կողմի մասնակցության մանրամասները:

Կայացել են նաև հանդիպումներ Օրենբուրգի հայ համայնքի նախագահ Գևորգ Սարգսյանի և հայ համայնքի ակտիվ գործիչների հետ: Նրանց կողմից ներկայացվել է քաղաքում գործող «Հայկական բակը», որն իր մեջ է ներառում թանգարան, արվեստի ցուցահանդես, «Հայ տուն» ռեստորան և բանահյուսական խմբերի կենտրոն: Թանգարանի ցուցահանդեսում ներկայացված են 17-19-րդ դարերի վավերական կենցաղային իրեր, ազգային տարազներ և երաժշտական գործիքներ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների համաշխարհային ասոցիացիայի նախագահ Վ.Վ. Չետիի հետ քննարկվել են

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երիտասարդության միջև առկա և ակնկալվող համագործակցությունը, ինչպես նաև «ապագայի մասնագիտություններ»-ը և արդի աշխատաշուկայում պահանջված լինելու համար երիտասարդության անհրաժեշտ հմտությունները: Համագործակցության և ուսանողների միջև փոխանակման ծրագրերի իրականացման մեխանիզմները քննարկվել են ՌԴ մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Սանկտ Պետերբուրգի Ա.Լ. Շտիգլիցի անվան Արվեստի և արդյունաբերության պետական ակադեմիայի, Կառավարման և տնտեսագիտության ինստիտուտի, «Տնտեսագիտական ավագ դպրոցի» և այլ բուհերի ներկայացուցիչների հետ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքը

ՌԴ մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ Սանկտ Պետերբուրգի Ա.Լ. Շտիգլիցի անվան Արվեստի և արդյունաբերության պետական ակադեմիայի, Կառավարման և տնտեսագիտության ինստիտուտի, «Տնտեսագիտական ավագ դպրոցի» ներկայացուցիչների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն հաստատել և ընդլայներ կապեր Հայաստանի Հանրապետության համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ՝ ստորագրելով համագործակցության հուշագրեր:
ՌԴ Երիտասարդության հարցերի դաշնային գործակալության երիտասարդական նախագծերի և ծրագրերի վարչության միջազգային բաժնի պետի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են հայկական կողմի մասնակցության ձևաչափն ու մանրամասները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

13.09.2021